

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՈՐՈՇՈՒՄ

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2013 թվականի N \_\_\_\_\_ -Ն

**ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է՝

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝

- 1) 2012 թվականի արդյունքներով 58.35 միլիոն ՀՀ դրամից մինչև 500 միլիոն ՀՀ դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը) իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողներին հսկիչ-դրամարկղային մեքենաների իրացման գին սահմանել առավելագույնը մինչև 280 հազ. ՀՀ դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը):
- 2) 2012 թվականի արդյունքներով 58.35 միլիոն ՀՀ դրամից պակաս իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողներին հսկիչ-դրամարկղային մեքենաների իրացման գին սահմանել առավելագույնը մինչև 150 հազ. ՀՀ դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը):

2. Հանձնարարել «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը կատարել վերահաշվարկ սույն որոշման առաջին կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված հարկ վճարողների կողմից ձեռք բերված հսկիչ-դրամարկղային մեքենաների արժեքի՝ իրացված գնի և սույն որոշման առաջին կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված գների տարբերությունը օրենդորությամբ սահմանված կարգով վերադարձնել հարկ վճարողներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հիմնավորում**  
**«ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ»**  
**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ**

**Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**

Որոշման ընդունումը պայմանավորված է 58,35 միլիոն դրամից մինչև 500 միլիոն դրամ շրջանառություն ունեցող և մինչև՝ 58,35 միլիոն դրամ շրջանառություն ունեցող ԱԱՀ վճարող համարվողների համար հսկիչ-դրամարկղային մեքենաների ձեռքբերման ավելի ցածր գներ սահմանելու անհրաժեշտությամբ:

**Առաջարկվող կարգավորման բնույթը**

Նախագծով սահմանվում է 58,35 միլիոն դրամից մինչև 500 միլիոն դրամ շրջանառություն ունեցող և մինչև՝ 58,35 միլիոն դրամ շրջանառություն ունեցող ԱԱՀ վճարող համարվողների համար հսկիչ-դրամարկղային մեքենաների ձեռքբերման ավելի ցածր գներ:

**Ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունմամբ կապահովվի փոքր և միջին ձեռնարակատերերի կողմից հսկիչ-դրամարկղային մեքենաների առավել բարենպաստ պայամաններով ձեռքբերումը և կիրառումը:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

«ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին

ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունել անհրաժեշտ չէ:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

«ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացման կամ նվազեցման մասին

ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: